1864.
30 Յուլիսի
քառասներորդ տարւոյ

Թիւ 22.
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ։

1864.
11 Օգոստոսի
քառասնորդ տարի.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրատարակութեան, մատակարարութեան եւ բաժանորդագրութեան նամակները է ի Մանչեստր։

—Նամակք, յօդուածք, գիրք եւ դրամոց (ազատ ի ծախուց փոստայի) ուղղելի յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, հետեւեալ հասցէն.

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ ծախուք փոստայի, որ եղեւ Անգղիոյ եւ Ֆրանսայի ընդհանուր եւ ընկերութեան, է 25 ֆ. ֆ.
—Այն տեղերէն ուր փոստայի ծախքն առանձին վճարի է։
—Կէսամեայն . . . . . . . . . . 13 ,,
—Եռամսեայն . . . . . . . . . . 7 ,,
—Մէկ թերթի գինն ի Մանչեստր է . . . . . 5
այլուր . . . . . . . . . . . 7
—Բաժանորդ լինելոյ ամեն ամսոյ մէկէն եւ ընդունելի է։

Առաքադրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սենեակն ի Ղալաթիա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն.—Հալէպ Յովհաննէս Աղայ Քիւրքճեանոմի սենեակն.—Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն.—Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն.—Կալկաթա Գ. Պետրոս Սարգսեանցի սենեակն.—Բաթաւիա Գ. Մանուկ Որդանանեանի սենեակն.—Լոնդոն Աղայ Մարսուտոֆֆի սենեակն.—Փարիզ Աղայ Պօղոս Արփաճեանի սենեակն.—Մարսիլիա Աղայ Մորգար Պապիկեանցի և Աղայ Յարութիւն Անդրէասեանի սենեակներն։ Առ այժմ ուզողներն կրնան վերոգրեալ սենեկաց մէկէն առնալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաձայ և ընթերցասէր քաղաքներ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Մարդասիրութիւն.—Տեսութիւն Քաղաքականութեան.—Թղթակցութիւնք. — Արարատ այգին է խմբել. — Անեկդոտներ։

### ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Եթէ քաղցր է պանդխտութեան մէջ եւ հիւանդութեան ատեն հաւատակցութեան և ազգակցութեան ամոքիչ մխիթարութիւն վայելել, աւելի քաղցր և վայելուչ է, այնպիսի հաղուագիւտ առաքինութեան յիշատակն ոչ միայն կրօնական երկիւղածութեամբ անջինջ պահել, այլ և ի լուր ներկայ և հանդերձեալ սերնդոց արձանագրել ի փառս Աստուծոյն և ի խրախոյս լուսոյ։

Մեծապատիւ, Մեծատուն և Մանչեստրի ամենահին և յայտ անուանի վաճառական Մանուկ Աղայն Խաչատուրեան, զոր Աստուած, բատ իւր առատ և ղուարթ սրտին, ձոխութեամբ, զաւակօք և զաւակօք վարձատրեր է, նոյնպէս Մեծարգոյ ազնուական և առատաձեռն Նշան աղայն Հարենց, որ, ինչպէս յայտնի է, Կոստանդնուպոլսեցի Մեծատուն և Բարեհամբաւ Մահտեսի Աբրահամ Աղայի անդրանիկ որդին է և համարեղ վաճառական ի Մանչեստր, մեր հիւանդութիւնն և կրած վիշտերն տեսնելով, համեցան մարդասիրաբար ոչ միայն այցելութեամբ և յուսադրական բանիւք զմեզ սփոփել. այլ և համեցան մեր Բրիստոլի ձանապարհորդութեան և այլ ծախքն յանձն առնուլ և հոգալ մինչև որ կատարեալ առողջութիւն գտնեմք։

Այսպիսի առաքինութիւններ, մանաւանդ մեր նիւթապաշտ դարուն մէջ, ուր դեղին մետաղն շատերու սրտին մէջ աստուածօրէն կպաշտի, եւ ազահ ոսկեմոլներէն երկրպագութիւն կընդունի, գովութեան կարօտ չեն բնաւ, բայց ի Փրկչի երանութիւններէն. «Օտար էի, և ժողովեցիք զիս, Հիւանդ էի՝ և տեսիք զիս»։ և բաց ի մեր երախտագէտ շնորհակալութենէն, որ սուրբ պարտաւորութիւն կհամարեմք, Տայմսի եզերքէն մինչև Գանգէսի եզերքն և Նեվայի ափերէն մինչև Նեղոսի ափերն քարոզել կուզեմ ի լուր ամեն ազգայիններու եւ օրհնել մեր բարերարաց, անոնց ընտանեաց եւ ժառանգաց կեանքն, խնդրելով կենդանեացն արևշատութիւն և յաջողութիւն եւ ննջեցելոցն՝ երանական հանգիստ ընդ Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Սրբոյն Լուսաւորչի և Պարթեւին Իսահակայ։

---

### ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Այս տարուանս մէջ գործուած անօրէն յափշտակութիւններէն, անիրաւ զրկանքէն, տկարն կողոպտելէն և սուրիներու բիրտ ուժի վերայ յեցեալ փոքրիկ մէկ ժողովրդեան, յանուն, չգիտեմ, ո՛ր սարտարուական սկզբանց, հալածական սեպհական երկիրն և բնակիչներն աւազակօրէն յափշտակելէն, եթէ ոչ վերջինն, գէթ չարագոյնն, զզուելին և սոսկալին եղաւ Աւստրիոյ եւ Պրուսիոյ՝ Դանմարգի երեք դքսութիւններն, Սլէզն եւ այլ կղզիներն եւ Յուդլանդի Շլեզվիգի մէջ երկնցած մասերն անխիղճ եւ անամօթ եղանակաւ յափշտակելն եղաւ։

Աւստրիա եւ Պրուսիա. որք, 60 տարի յառաջ, իրենցմէ աւելի բռնաւորագունին հանդիպելով եւ իրենց երկրի երեք չորրորդ մասն կորսնցուցած՝ չնայելով իրենց յոխորտ եւ բարձրայօն բարուցն, ասդիս անդին ծակամուտ եղեր, իրենց կնիկներն յաղթողի դրանն կխրկէին ողորմութիւն խնդրել, Աւստրիա եւ Պրուսիա, կըսեմ, երկնային արդարադատութեան խրատն հեշտ եւ շուտով մոռցան, որ թէև իրենց յափշտակութեանցն չափ եւ սահման դնելու համար տրուած էր։ Ինչևիցէ, մեր հաւատոյ եմք, կատարելապէս ապահով եմք, որ եթէ բոլոր տէրութիւնք հաստատեն եւ կնքեն Դանմարգի կողոպուտն. սակայն երկինք, անա-

